

5.3. 2011 թվականի փետրվար ամսվա հիդրոոդերևութաբանական վիճակը Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից բարձր 1-2 աստիճանով, ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում՝ նույնքան նորմայից ցածր:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 1-2 աստիճանով, երկրորդ տասնօրյակում՝ 0.5-1 աստիճանով (Արարատյան դաշտավայրում՝ 1-3 աստիճանով բարձր), երրորդ տասնօրյակում՝ 3-4 աստիճանով բարձր, (ՀՀ Լոռու, Տավուշի և Սյունիքի մարզերում՝ 1-3 աստիճանով ցածր):

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և Արարատյան դաշտավայրում կազմել է +4 +6°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +3 +5°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ 0 +2°C, լեռնային շրջաններում՝ -2 -4°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 7-ին, Սյունիքի հովիտներում գրանցվել է +14 +19°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +9 +14°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ +4 +9°C: Փետրվարի 23-25-ին բարձր ջերմաստիճաններ գրանցվել են Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ +10 +13°C, լեռնային շրջաններում՝ +2 +6°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է -9 -14°C, ՀՀ Լոռու մարզում և Սյունիքի նախալեռներում՝ -6 -9°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -3 -4°C, Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում՝ 0 -3°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 3-4-ին, լեռնային շրջաններում գրանցվել է -19 -24°C, ՀՀ Լոռու մարզում -18 -20°C (ք.Տաշիրում՝ -23°C), Սյունիքի նախալեռներում՝ -11 -15°C (ք.Միսիանում (ՀՀ Սյունիքի մարզ)՝ -22°C), Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -11 -16°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -4 -6°C, Սյունիքի հովիտներում՝ -4 -9°C:

Փետրվար ամսվա ընթացքում ողջ հանրապետությունում տեղումների քանակը եղել է նորմայից բարձր: Լեռնային շրջաններում այն կազմել է նորմայի 150-200%-ը, (ք.Գավառում (ՀՀ Գեղարքունիկի մարզ)՝ 300%, Ծաղկահովիտ գյուղում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 248%), ՀՀ Լոռու մարզում՝ 150-250%, ՀՀ Տավուշի մարզում՝ 157-212%, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ 145-216%, ՀՀ Սյունիքի մարզում՝ 203-293%:

Փետրվարի 1-ին, 4-ին (ցերեկը), 15-16-ին, 20-22-ին և 25-28-ին տարածաշրջանների մեծ մասում, 2-3-ին արևելյան շրջաններում դիտվել են տեղումներ, 1-ին, 16-ին և 27-ին՝ ամենուրեք ձյուն: Փետրվարի 1-ին ուժեղ ձյուն է դիտվել Ուրցաձոր գյուղում (ՀՀ Արարատի մարզ)՝ 25 մմ/12 ժ, ք.Գավառում՝ 28 մմ/12 ժ, ք.Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ)՝ 20 մմ/12 ժ, 21-ին ք.Հրազդանում (ՀՀ Կոտայքի մարզ)՝ 22 մմ/12 ժ: Չյան ծածկույթի բարձրությունը փետրվարի 28-ի դրությամբ Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 165 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 150 սմ, ք.Ջերմուկում՝ 99 սմ, ք.Հրազդանում՝ 88 սմ, Սեյմունովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 72 սմ, Անանուն լեռնանցքում (ՀՀ Արարատի մարզ)՝ 68 սմ, Աշոցք և Ամասիա գյուղերում (ՀՀ Շիրակի մարզ)՝ համապատասխանաբար 58 սմ և 50 սմ, մնացած

5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

լեռնային շրջաններում, ՀՀ Լոռու, Տավուշի մարզերում և Սյունիքի նախալեռներում՝ 20-25 սմ, Սյունիքի հովիտներում՝ 4-7 սմ: Արարատյան դաշտավայրում ձյան ծածկը բացակայել է:

Փետրվարի 1-2-ին Արարատյան դաշտավայրում, 19-27-ին լեռնային և արևելյան առանձին շրջաններում դիտվել է մառախուղ 50-500 մ տեսանելիությամբ: Փետրվարի 6-7-ին և 10-16-ին ՀՀ Լոռու, Տավուշի, Սյունիքի մարզերում և լեռնային առանձին շրջաններում դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 12-17 մ/վրկ, պոռթկումները՝ 20-25 մ/վրկ:

Հանրապետության գետերում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-130%-ը:

Սևանա լճի մակարդակը փետրվար ամսվա ընթացքում բարձրացել է 2 սմ-ով և փետրվարի 28-ի դրությամբ կազմել 1899.96 մ, որը 2010թ. նույն օրվա համեմատ բարձր է 44 սմ-ով: